Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման ծրագիր

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀՐԱՎԵՐ. ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՊՈՐՏՖԵԼՆԵՐ ՏԵՂԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ այն համայնքների ընտրության համար, որոնք հետաքրքրված են՝ մշակելու և գործարկելու վերափոխող և կայուն աճին նպաստող համակարգային միջոցառումների պորտֆելներ:

Հետաքրքրության արտահայտման հրավերը (ՀԱՀ) բաց է Արևելյան գործընկերության երկրներում՝ Հայաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրի ցանցին անդամակցող համայնքների համար:

2025 թվականի մայիս

[Սույն փաստաթուղթը նախատեսված է տեղական ինքնակառավարման մարմինների/ՀՀՏՀ ցանցի անդամների համար՝ նկարագրելու ՀԱՀ-ի նպատակը, չափանիշները և ուղեցույցը]

Բովանդակություն

Տերմիններ և սահմանումներ 3
Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման ծրագիր 5
Առաքելությանը միտված տնտեսության ուղին 5
ՀԱՀ-ի առաքելության թեման - Տնտեսական դիմակայունություն 11
Ընտրության գործընթացը 13
Նախատեսվող ժամանակացույց 15
Համապատասխանություն և ընտրության չափառորոշիչներ 16
Համապատասխանության չափորոշիչները. 16
Ընտրության չափորոշիչներ. 16
Դիմելու գործընթացը և լրացուցիչ տեղեկություններ 18

Տերմիններ և սահմանումներ

Տեղական ինքնակառավարման մարմիններ/համայնքապետարաններ. Փաստաթղթում օգտագործվում են այս երկու տերմինները՝ փոխարինաբար: Հնարավոր է հանդիպել նույն իմաստն արտահայտող հարակից տերմիններ, ինչպիսիք են՝ քաղաքային համատեքստը և քաղաքները:

Բարդ (կոմպլեքս). Տերմին, որն օգտագործվում է «համակարգը» բնութագրելու կամ նկարագրելու համար: Բարդ համակարգեր կարելի է գտնել ամենուր՝ բնության, երթևեկության, ուղեղի աշխատանքում, տնտեսության և հասարակության մեջ: Բարդ համակարգերը հաճախ բնութագրվում են անկայուն վարքով, ոչ գծային դինամիկայով, սահմանափակ կանխատեսելիությամբ, ինքնակազմակերպմամբ և հիմնարար անորոշությամբ: Դրանք բաղկացած են տարբեր հավակնություններ, շահեր և արժեքներ ունեցող միլիարդավոր գործոններից: Այս գործոնները համակարգում են իրենց փոխազդեցությունները համայնքների, սոցիալական կառուցվածքների (օրինակ՝ շուկաների և ընկերությունների) և ինստիտուցիոնալ ռեժիմների միջոցով (օրինակ՝ ազգային պետություններ և օրենքներ): Այս համակարգերը սկզբունքորեն բարդ են մարդկային գործոնի պատճառով, որը գտնվում է դրանց հիմքում: Տերմինը կիրառվում է նաև քաղաքի կամ համայնքի մասշտաբով, որտեղ բազմաթիվ ոլորտների բազմաթիվ դերակատարներ ունեն ֆորմալ և ոչ ֆորմալ փոխազդեցություն: Հետևաբար, մենք չենք կարող լիովին կանխատեսել վարքագիծը, և չկան «ճիշտ» լուծումներ, որոնք սպասում են իրենց հայտնաբերման պահին, ինչը դժվարացնում է որոշումների կայացումը:

Համակարգային մտածողությունը. բարդ/կոմպլեքս խնդիրների կառավարման հիմքում է, քանի որ այն օգնում է մեզ տեսնել համակարգերի ամբողջությունը և ոչ միայն դրանց մասերը: Սա աշխարհին ամբողջական նայելու մեթոդ է, որտեղ համակարգի մասերը, ինչպիսիք են զարգացման մարտահրավերները, կարելի է ճիշտ հասկանալ և, հետևաբար, լավ կառավարել միայն այն դեպքում, երբ դիտարկվում են որպես ամբողջ համակարգի մաս: Համակարգային պրիզման կօգնի մեզ հասկանալ և բացահայտել, թե որտեղ պետք է գործել և փոխազդել փոխկապակցված և փոխադարձ կախվածություն ունեցող բարդ համակարգերում, ինչպիսիք են՝ համայնքապետարանները: Համակարգերը պետք է քարտեզագրվեն պարզելու համար, թե որտեղ և ինչպես կարող է նորարարությունը դեր խաղալ փոփոխությունների դինամիկայի կատալիզացման գործում, և միջամտությունները մշակվեն որպես «Առաքելությանը միտված պորտֆելներ», որոնք կարող են միաժամանակ հարթել տարբեր խոչընդոտներ և օգտվել տարբեր հնարավորություններից: Առաքելությանը միտված պորտֆելները կարող են ներառել սոցիալական նորարարություն, ինչպես նաև նորարարություն ֆինանսների, տեխնոլոգիաների, քաղաքականության, կառավարման, քաղաքացիների ներգրավվածության, կրթության, և փոփոխության այլ համապատասխան լծակների մեջ:

Ռազմավարական նորարարությունը. նորարարության կիրառման միջոցով լայնածավալ փոփոխություններ առաջացնելու ունակությունն է հատային նախագծերից և փորձարկումներից անդին: Այն արդյունավետորեն ներգրավվում է գիտելիքների ստեղծման և կիրառման մեջ՝ անորոշության պայմաններում որոշումների կայացմանն աջակցելու և գործողությունների մշակումն արագացնելու համար: Ռազմավարական նորարարությունը պահանջում է աշխատել խնդրի կամ մարտահրավերի «տերերի» հետ՝ ապահովելու հստակ առաքելություն կամ մտադրություն և հստակ պահանջի արտահայտում, որպեսզի տեղի ունենան տրանսֆորմացիոն փոփոխություններ: Ռազմավարական նորարարությունը հիմնված է համակարգային մտածողության վրա՝ հաշվի նստելով մեզ շրջապատող աշխարհում առկա մշակույթի, ինքնության և վարքագծային դերերի հետ և ինտեգրելով այս հիմնաքարային կառույցները, երբ նպատակը տրանսֆորամցիոն դրական փոփոխությունների իրականացումն է:

Պորտֆելները. ռազմավարական նորարարությունը ծրագրային ձևաչափի մեջ ներդնելու գործնական միջոց են: Պորտֆելը բաղկացած է մի խումբ փոխկապակցված նորարարություններից, որոնք նախատեսված են ռազմավարական նորարարության գործընթացի ավելի վաղ փուլերում հայտնաբերված բարդ համակարգերի տարբեր խնդիրներին միաժամանակ անդրադառնալու համար:

Պորտֆելի միջամտությունների հիմնական բնույթը կայանում է «սովորելու» և «բացահայտելու» մեջ՝ հարափոփոխ սոցիալական համակարգերի վերաբերյալ գիտելիք ստեղծելու նպատակով: Պորտֆելը պետք է լինի դինամիկ և զարգանա՝ գործընթացի միջոցով սովորելու, նոր գաղափարներ և դերակատարներ փնտրելու և բազմաթիվ միջամտությունների միջև սիներգիայի խթանման հիման վրա: Պորտֆելը բաղկացած է սովորելու, կարողությունների, ռեսուրսների և փորձարկումների համատեղումից, որոնք միասին հանգեցնում են փոխակերպող փոփոխությունների՝ ի տարբերություն մեկ առանձին միջամտության (օրինակ՝ նախագիծ կամ դրամաշնորհ):

Առաքելությանը միտված տնտեսության մոտեցում. Այս մոտեցումը կենտրոնանում է նպատակային, ռազմավարական միջամտությունների միջոցով հասարակության առաջ կանգնած կոնկրետ մարտահրավերների լուծման վրա: Այն ներառում է հստակ, հավակնոտ նպատակներ («առաքելություններ»), որոնք պահանջում են նորարարություն և համակարգում՝ տարբեր ոլորտների և դերակատարների միջև: Այս մոտեցումը նպատակ ունի խթանել տնտեսական աճը՝ լուծելով բարդ խնդիրներ, ստեղծելով փոխկապակցված լուծումներ, որոնք օգուտ են բերում ամբողջ հասարակությանը:

Իմաստավորումը. մեր գործողություններից դասեր քաղելու ունակությունն է և այն գտնվում է պորտֆելի դինամիկ կառավարման հիմքում: Իրականացման փորձից ստացվող արձագանքների միջոցով ձևավորվում են քաղված դասեր և հետևություններ, որոնք օգնում են կիրառելի գիտելիք ձևավորել պորտֆելում: Այս գիտելիքն, այնուհետև, կրկին ներդրվում է պորտֆելում՝ մեր ծրագրերը համատեքստին ավելի համահունչ և համապատասխան պահելու և մասշտաբային ձևափոխման ընթացքն ավելի արագացնելու համար: Հետադարձ կապն ապահովում է անհրաժեշտ տեղեկություն պորտֆելի քաղաքականության մշակման և դինամիկ կառավարման համար:

Գենդերարձագանքող. Սա վերաբերում է այն քաղաքականություններին, ծրագրերին կամ գործողություններին, որոնք ակտիվորեն դիտարկում և անդրադառնում են անհատների տարբեր կարիքներին, փորձառություններին և մարտահրավերներին՝ նրանց սեռով պայմանավորված: Այն ներառում է՝ նախևառաջ գենդերային անհավասարությունների բացահայտում, այնուհետև դրանց լուծում և գենդերային հավասարության խթանում՝ ապահովելով, որ արդյունքները աջակցեն բոլոր սեռերի հզորացմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց վրա: Գենդերարձագանքող մոտեցումը ներառում է.

- Գենդերային անհավասարությունների բացահայտում՝ վերլուծելով, թե ինչպես են տարբեր սեռերի վրա ազդում քաղաքականությունները կամ նախաձեռնությունները, և իրականացնելով անհավասարությունների վերացմանն ուղղված գործողություններ:
- Հավասար մասնակցության և որոշումների կայացման հնարավորությունների ապահովում բոլոր սեռերի համար.
- Գենդերային հեռանկարների և նկատառումների ինտեգրում պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում:

Ծանոթագրություն «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրի 3-րդ փուլի մասին.

2017թ. Եվրոպական միության (ԵՄ) կողմից առաջին մեկնարկից ի վեր, և ավելի ուշ՝ 2021թ. վերսկսելով նախաձեռնությունը ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և հիմնական գործընկերների ներգրավվածությամբ, Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման (ՀՀՏԶ/M4EG) ծրագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի տեղական իշխանություններին և համայնքներին՝ ուսումնասիրելու և գործի դնելու տնտեսական աճի նորարարական ուղիները: Հիմնվելով 2-րդ փուլի հաջողությունների և գիտելիքների վրա՝ ՀՀՏԶ-ն կշարունակի աջակցել ԱԼԳ երկրների համայնքներին նոր գործիքներով և գործելակերպով՝ խթանելու նորարարությունը, համագործակցությունը և ներդրումներին պատրաստվածությունը՝ հանուն տեղական տնտեսական կայուն աճի:

Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման ծրագիր

ԵՄ-ն և ՄԱԶԾ-ն աջակցում են Արևելյան գործընկերության (ԱԼԳ) տարածաշրջանի (Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա) տեղական իշխանություններին՝ դառնալու կայուն, ներառական տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման ակտիվ օժանդակողներ: Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման ծրագրի (2025-2028) այս նոր փուլը (այսուհետ՝ ՀՀՏԶ) հիմնվելով 2-րդ փուլի հաջողությունների վրա (2021-2024) նպատակ ունի մշակել և իրականացնել կոմպլեքս իրավիճակները հասկանալու և կառավարելու նորարարական մոտեցում, համակարգային մտածողություն և Առաքելությանը միտված պորտֆելի ձևավորում տեղական իշխանությունների համար՝ սահմանելու իրենց կարիքները և լուծելու կոմպլեքս խնդիրներ՝ համագործակցելով տարբեր շահագրգիռ կողմերի հետ, փորձարկելով տարբեր լուծումներ և սովորելով միմյանցից, ինչը տեղավորվում է «ռազմավարական նորարարության» ընդհանուր շրջանակի մեջ:

Առաջիկա 4 տարիների ընթացքում գործողությունը կընդգրկի Հայաստանը, Մոլդովան, Ուկրաինան և **նպատակ ունի**.

- Ընդլայնել հասանելիությունը և ավելացնել առցանց և օֆլայն ուսուցման ավելի շատ հնարավորություններ ՀՀՏԶ ցանցերի բոլոր անդամների համար՝ ֆինանսական միջոցների ներգրավման և ֆինանսավորման նոր աղբյուրների բացահայտման, առաջնորդության, թվային հմտությունների, ի թիվս այլ ուղղությունների, տեղական իշխանությունների համար կանաչ անցման և զարգացման կարողություններ ստեղծելու համար:
- Տարածաշրջանից ընտրված թվով մինչև 20 կամ ավելի տեղական ինքնակառավարման մարմիններ կանցնեն խորը ուսուցման և ուղղորդման ճանապարհով Առաքելությանը միտված պորտֆելների մշակման և ակտիվացման համար՝ ստանալով մեկնարկային դրամաշնորհներ, այնուհետև զարգացման և նախագծերի մասշտաբայնացման դրամաշնորհներ՝ առաջարկների ամենամյա բաց մրցույթի միջոցով: Ընտրված տեղական ինքնակառավարման մարմինները հասանելիություն կունենան նախագծերի ինստիտուցիոնալացման և միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության՝ Առաքելությանը միտված տնտեսության ծրագրի շրջանակներում:
- Կհայտարարվի Նորարարական մարտահրավերների դրամաշնորհը, որի միջոցով ԱԼԳ երկրների համայնքները հնարավորություն կունենան տեղական մակարդակում փորձարկել ֆինանսական միջոցների ներգրավման նոր եղանակներ և գործիքներ:
- Համատեղ հյուրընկալել տարածաշրջանային ֆորումներ և ձևավորել ազգային հարթակներ, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները և այլ շահագրգիռ կողմերը փոխանակվեն ձևավորվող փորձով, ոգեշնչող գործողություններով և քաղված դասերով:

Առաքելությանը միտված տնտեսության ուղին

Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման ծրագրի նպատակն է մշակել և համայնքների համար կիրառել «Առաքելությանը միտված տնտեսության մոտեցումը», որպեսզի վերջիններս բացահայտեն իրենց կարիքները և լուծեն բարդ խնդիրները՝ համագործակցելով տարբեր շահագրգիռ կողմերի հետ և փորձարկելով տարբեր լուծումներ:

Այդ իսկ նպատակով, ցանցի անդամ համայնքների մի մասը, հիմնվելով իրենց տեղական զարգացման ռազմավարության վրա (LEPD կամ համարժեք) և ներդնելով Առաքելությանը միտված տնտեսության մոտեցումը, կմշակեն 40-ից ավելի փորձնական միջամտություններ՝ համայնքային վերափոխումների մեջ կոնկրետ արդյունքներ ցույց տալու համար:

Ընտրված համայնքները կկիրառեն **ռազմավարական նորարարության շրջանակ** (տես գծապատկերը ստորև)՝ օգտագործելով հետևյալ գործիքները և տեխնիկան.

- Համայնքային ունկնդրում (լսել հասարակության մեջ առկա պատմությունները)
- Նորարարների, ներդրողների և հանրային ծառայողների տարբեր խմբերի հետ ֆինանսավորման ենթակա նախագծերի համատեղ ստեղծում
- Առաքելությանը միտված պորտֆելների ակտիվացում և դրանց դինամիկ կառավարում
- Մասնավոր հատվածի և ֆինանսավորման այլ ձևերի (ներառյալ սոցիալական ձեռնարկությունների) ներգրավման համար ֆինանսավորման ենթակա նախագծերի ակտիվ մշակում
- Տեղական իշխանությունների կարողությունների զարգացում

Գծապատկեր 1. Այս նորարարական գործընթացին աջակցելու հասանելի գործիքների օրինակ:

Գործնականում դա ենթադրում է աջակցություն համայնքներին կանաչ և ներառական վերափոխման համար՝ զսպելով արտագաղթը, միաժամանակ օգտագործելով տարբեր ռեսուրսներ՝ վերափոխումը ֆինանսավորելու համար: Խնդիրները կլուծվեն փոխկապակցված արդյունքների և գործողությունների միջոցով՝ հասնելու տեղական իշխանությունների կարողությունների խորացմանը և իրականացնելով պորտֆելներ, որոնք նպաստում են ԱԼԳ տարածաշրջանի տեղական մակարդակում բնապահպանական և սոցիալ-տնտեսական արդյունքների բարելավմանը: Սա ենթադրում է աջակցություն տեղական իշխանություններին ներդրումների համար պատրաստ պորտֆելների համատեղ մշակման համար. գործընթացի մեջ ներգրավելով տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության, նորարարների, տեղական մակարդակում փոփոխություններ բերողների և մասնավոր հատվածին՝ հնարավորություն տալով ՀՀՏԶ ողջ ցանցում ակտիվ ուսուցման և գիտելիքների փոխանակման, ինչպես նաև փոխկապակցված ներդրումների մեկնարկման և դինամիկ կառավարման համար, համայնքների վերափոխման և դրանք՝ ապրելու համար ավելի լավ վայր դարձնելու նպատակով: Ծրագիրը նպատակ ունի մշակել Առաքելությանը միտված պորտֆելներ, որոնք կնպաստեն ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանը տեղական կարիքները բավարարելու համար՝ միաժամանակ ընդգրկելով հետևյալ ոլորտները.

- Կառավարում - քաղաքացիական մասնակցության (հատկապես՝ կանանց և սահմանափակ հնարավորություններով խմբերի) խթանում, թափանցիկության և հաշվետվողականության

մակարդակի բարձրացում, ինչպես նաև անցում թվային, բաց և ընդգրկուն կառավարման մոդելների,
- Տնտեսություն – տեղական տնտեսությունների հզորացում, ձեռներեցների և նորարարների համար հնարավորությունների ընդլայնում, նոր և կանաչ բիզնես մոդելների փորձարկում,
- Շրջակա միջավայր – կանաչ վերականգնում, հանրային տարածքների վերակենդանացում, կայուն ծառայությունների անցում, կլիմայական դիմակայունությամբ ենթակառուցվածքների զարգացում և օդի որակի բարելավում:

Առաքելությանը միտված պորտֆելները կմշակվեն համայնքների տեղական զարգացման ռազմավարության (Տեղական տնտեսական զարգացման պլան կամ համարժեք), փոխակերպման և դինամիկայի առկա ներուժի հիման վրա (բացահայտելով ներուժը), լիովին համապատասխանելով շահառու համայնքների համատեքստին (տեղական իշխանություններ, բնակիչներ, քաղաքացիական խմբեր և մասնավոր հատված): Ինչպես նաև, պորտֆելները պետք է նախագծված լինեն «հասանելի» ռեսուրսներով իրագործվելու համար:

Ո՞րն է համայնքի վերափոխման նպատակը.

Կարծում ենք, որ Առաքելությանը միտված պորտֆելային մոտեցման կիրառումը այս մարտահրավերների նկատմամբ կունենա հիմնարար և համապարփակ օգտակարություն՝ մասնակից համայնքներին հնարավորություն տալով ավելի առաջ գնալ և ավելի արագ հասնել այնպիսի արդյունքների, ինչպիսիք են՝ կլիմայական չեզոքությունը և սոցիալական արդարությունը: Հաճախ կա գործելու պատրաստակամություն, բայց կարողությունների, ռեսուրսների և նոու-հաուի/ know-how պակաս: COVID-19-ի ազդեցությունն ավելի բարդացրեց իրավիճակը, բայց այն իր հետ բերեց նաև նոր հնարավորություններ: Համայնքներն այժմ փորձում են գտնել ճիշտ բալանսը բնակչության պաշտպանության և կայունության միջև՝ ձգտելով պահպանել վստահությունը: Միևնույն ժամանակ, շարունակական ճգնաժամերն իրենց վրա են սևեռում ողջ ուշադրությունն ու ռեսուրսները, ինչի արդյունքում հասարակության մեջ տեղի են ունենում զգալի սոցիալական և վարքագծային փոփոխություններ:

Այս նախաձեռնությունը փորձում է լուծել այս մարտահրավերները համակարգային մոտեցման միջոցով, որը դուրս է նախագծային կառավարման ստանդարտ հատվածային մեթոդներից: Քանի որ խնդիրները և լուծումները փոխկապակցված և կապված են, նեղ նպատակային լուծումները կարող են չբերել ակնկալվող արդյունքը կամ չհանգեցնել համակարգային ազդեցության: Այն կօգնի մասնակից թիմերում զարգացնել կարողություններ՝ մշակելով լուծումների պորտֆել, որոնք միավորվելու դեպքում, կբերեն սովորելու հնարավորություններ և նոր գաղափարներ, կմիավորեն ռեսուրսները, մասշտաբի էֆեկտ օգուտներ և մասնակից թիմերի համար վստահություն ձևավորելու, կապիտալ հավաքելու և միմյանցից սովորելու կարողություն:

Այս ընթացքը հնարավոր դարձնելու համար կտրամադրվի համապարփակ օժանդակության փաթեթ՝ ներառյալ տեխնիկական և ֆինանսական աջակցությունը:

Սա մինչև մեկ տարի տևողությամբ գործընթաց է մեկնարկային փուլում, որի ընթացքում ընտրված համայնքները սերտորեն կներգրավվեն ՄԱԶԾ-ի ուսուցողական ծրագրերում՝ մշակելու առաքելությանը միտված պորտֆելներ և իրականացնելու նախագծված միջամտությունները:

Ընդհանուր առմամբ, **փուլային մոտեցմամբ**, հասանելի կլինի $120,000 ԱՄՆ դոլարի դրամաշնորհային աջակցություն.

- **$20,000 ԱՄՆ դոլար մեկնարկային դրամաշնորհի** տրամադրում բոլոր ընտրված համայնքներին՝ նախագծելու և մշակելու Առաքելությանը միտված իրենց պորտֆելը և սկսելու գործողությունների փորձարկումն ու իրականացումը:
- **$40,000 ԱՄՆ դոլար զարգացման դրամաշնորհի** դիմելու հնարավորություն այն համայնքների համար, որոնք փորձարկել և իրականացրել են Առաքելությանը միտված պորտֆելը՝ շարունակելու պորտֆելի զարգացումը և ընտրված գործողությունների հետագա ընդլայնման համար:
- **$40,000-60,000 ԱՄՆ դոլար մասշտաբի էֆեկտի ստացման** դրամաշնորհի դիմելու հնարավորություն փորձարկված գործողությունների ինստիտուցիոնալացման և համակարգային ներդրման համար:

ՀՀՏԶ-ն նաև կօժանդակի միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) հետ կապերի հաստատմանը՝ ծրագրերի հետագա ընդլայնման համար, և որոշ դեպքերում ավելի մեծ դրամաշնորհներ կարող են տրամադրվել մասշտաբային աճի ներուժ ունեցող նախագծերին:



Հայտերի ընդունման գործընթացի այս փուլը վերաբերում է միայն մեկնարկային հոսքի ընտրությանը: Ընտրության նույն չափանիշները կկիրառվեն զարգացման և մասշտաբի էֆեկտի ստացման հոսքերով առաջ շարժվելու համայնքապետարանի հանձնառությունը գնահատելու համար:

Ի՞նչ կարող են ակնկալել ընտրված համայնքապետարանները

Առաքելությանը միտված տնտեսության հոսքի մեկնարկային փուլում ընտրված համայնքներին.

- կտրամադրվի նորարարական գործընթացների ներդրման աջակցություն, որը՝
    - կօգնի տեսնել խնդիրը նոր/այլ դիտանկյունից
    - բացահայտել առաքելությունը և ռազմավարական առումով կարևոր մեկնարկի կետերը,
- կտրամադրվի համայնքում՝ առաքելությանը համահունչ 2-5 նորարարական և փորձարարական միջամտություններ նախագծելու և մշակելու աջակցություն,
- կտրամադրվի ֆինանսական աջակցություն՝ փորձարարական բնույթ ունեցող և առաքելությանը համահունչ միջամտությունների ուղղությամբ տարբեր ծախսային հոդվածներով օգտագործելու համար: (*Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս ֆինանսական աջակցության միջոցով արգելվում է վճարել աշխատավարձեր տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին: Այդուհանդերձ, ներգրավված աշխատակիցների աշխատավարձերը կարող են համարվել ներդրում համայնքապետարանի կողմից*):

- Ակնկալվում է, որ մշակված փորձարարական միջամտությունները համայնքները կիրականացնեն մշակման ավարտից հետո՝ 2-6 ամսվա ընթացքում:
- Համայնքապետարանները պատասխանատվություն կստանձնեն իրականացման, դինամիկ կառավարման և առաջընթացի, քաղված դասերի և ֆինանսական մանրամասների վերաբերյալ հաշվետվությունների ապահովման համար:

ՀԱՀ-ի առաքելության թեման - Տնտեսական դիմակայունություն

2025թ. ապրիլ-մայիս ամիսներին հարցում է անցկացվել Հայաստանի ՀՀՏՁ ցանցի անդամ համայնքների շրջանում՝ տարբեր թեմատիկ ոլորտներում տեղական մակարդակի առաջնահերթությունները հասկանալու համար:

Կլիմայական գործողություն

Կլիմայի հետ կապված աճող մարտահրավերներով պայմանավորված, ինչպիսիք են էքստրեմալ եղանակային երևույթները, համայնքապետարանն առաջնահերթություն է տալիս կլիմայի փոփոխության մեղմման և դրա ազդեցություններին հարմարվելու այնպիսի ռազմավարություններին, ինչպիսիք են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը կամ կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ տեղական տնտեսությունների դիմադրողականության բարձրացումը: Կլիմայական գործողությունների իրականացումը նպաստում է կայուն համայնքային զարգացմանը, բարելավում է հանրային առողջությունը և պաշտպանում տեղական էկոհամակարգերը՝ նպաստելով ավելի կայուն ապագայի:

Էներգետիկ դիմակայունություն

Էներգետիկ դիմակայունությունը ենթադրում է ենթակառուցվածքի խափանումների, մատակարարման շղթայի խնդիրները կամ բնական աղետների ժամանակ՝ հուսալի էներգետիկ համակարգեր պահպանելու համայնքապետարանի կարողությունը: Սա ներառում է էներգիայի աղբյուրների դիվերսիֆիկացում, ենթակառուցվածքների արդիականացում՝ այն ավելի էներգաարդյունավետ դարձնելու համար և արտակարգ իրավիճակների պլանավորում՝ հիմնական ծառայությունների և համայնքի ընդհանուր բարեկեցության համար էներգիայի կայուն և շարունակական մատակարարում ապահովելու համար:

Շրջանաձև տնտեսություն

Շրջանաձև տնտեսությունը կայուն մոդել է, որը կենտրոնացած է թափոնները նվազագույնի հասցնելու և ռեսուրսներն առավելագույնս օգտագործելու վրա՝ վերաօգտագործելով, վերամշակելով և վերականգնելով նյութերը: Այն խթանում է տնտեսական աճը, նվազեցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և նպաստում ռեսուրսների արդյունավետությանը: Այս մոդելին անցնելով՝ տեղական ինքնակառավարման մարմինները կարող են բարելավել թափոնների կառավարման համակարգերը, ստեղծել կանաչ աշխատատեղեր և բարելավել հանրային առողջությունը: Շրջանաձև գործելակերպերի ընդունումն օգնում է համայնքապետարաններին համապատասխանել բնապահպանական բարձր չափանիշներին՝ ներգրավելով ներդրումներ և աջակցելով համայնքի կայուն զարգացմանը:

Տնտեսական դիմակայունություն

Տնտեսական դիմակայունությունը տեղական տնտեսության՝ փոփոխվող հանգամանքներին նորարարության միջոցով հարմարվելու ունակությունն է: Սա նաև ցնցումներին և սթրեսներին դիմակայելու և վերականգնվելու կարողությունն է, ինչպիսիք են հակամարտությունների, բնական աղետների, ժողովրդագրական տեղաշարժերի և այլնի հետևանքով առաջացած ճգնաժամերը: Սա ներառում է հիմնական ծառայությունների պահպանում և բարելավում, աճի և կայուն զարգացման խթանում, հարմարվող ֆիզիկական և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի ստեղծում՝ հարափոփոխ ժամանակներում արդիականությունը պահպանելու և ետ չմնալու համար:

Տնտեսական դիվերսիֆիկացիա

Տնտեսական դիվերսիֆիկացիան վերաբերում է համայնքապետարանի տնտեսական բազայի ընդլայնմանը՝ նպաստելով արդյունաբերական նոր ուղղությունների զարգացմանը և նվազեցնելով կախվածությունը մեկ հատվածից կամ շուկայից: Այս առաջնահերթությունները չափազանց կարևոր են տնտեսական ցնցումները և շրջակա միջավայրի դեգրադացումը կանխելու համար: Տնտեսությունների դիվերսիֆիկացիան ստեղծում է աշխատատեղեր և խթանում աճը, մինչդեռ էկոհամակարգերի զարգացումն ապահովում է կայուն պրակտիկա և բարելավում կյանքի որակը: Այս գործընթացներն օգնում են համայնքապետարաններին հարմարվել գլոբալ փոփոխություններին, ներգրավել ներդրումներ և բարձրացնել սոցիալական հավասարությունը՝ նպաստելով երկարաժամկետ կայունությանը և համայնքի բարեկեցությանը:

Ներառական աճ

Ներառական աճը երաշխավորում է տնտեսական զարգացման օգտավետությունը բոլորի, հատկապես բնակչության առավել խոցելի խմբերի համար (հաշմանդամություն ունեցող անձինք, ներքին տեղահանվածներ, փախստականներ, վետերաններ և այլն)՝ միաժամանակ պաշտպանելով շրջակա միջավայրը: Դա նշանակում է հավասար հնարավորությունների ստեղծում բոլորի համար՝ կամրջելով սոցիալական և գենդերային բացերը, խթանելով բիզնեսն ու սոցիալական նորարարությունը և պաշտպանելով մոլորակը, որպեսզի մարդիկ, բիզնեսները և շրջակա միջավայրը կարողանան միասին բարգավաճել: Ճգնաժամի ժամանակ մեծագույն մարտահրավերների բախվող բնակչությունն արժանի է թիրախային աջակցության և այնպիսի ռեսուրսների, որոնք կուժեղացնեն իրենց դիմակայունությունը և կբավարարեն իրենց հրատապ կարիքները: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում միայն՝ հոգե-սոցիալական աջակցություն, ֆիզիկական և մտավոր վերականգնում, զբաղվածության հնարավորությունների ստեղծում, համայնքաշինություն և այլն:

Հարցմանը մասնակցել են ՀՀՏՁ ցանցի անդամ 33 համայնքներից 21-ը (63.6%), որոնք առաջնահերթությունը տվել են տնտեսական դիմակայունությանը և շրջանաձև տնտեսությանը՝ հետևյալ հիմնավորումներով.

- Անդրադառնում է խոցելիության հիմնական պատճառներին (աղքատություն, գործազրկություն, արտագաղթ):
- Ստեղծում է շրջանաձև և էներգետիկ լուծումների ինտեգրման հիմք:
- Համապատասխանում է համայնքի առաջնահերթություններին (գոյատեւում, կայունություն) և դոնորների օրակարգերին:

Տնտեսական դիմակայունությունը համայնքների համար օպտիմալ առաջնահերթություն է՝ ազգային և միջազգային օրակարգերի հետ համընթաց շարժվելու շնորհիվ: ՀՀ կառավարության 2021–2026թթ. ծրագրում շեշտը դրվում է տարածաշրջանային զարգացման և աղետներին դիմակայելու վրա, մինչդեռ որոշ ՄԱԶԾ ծրագրեր և ԵՄ նախաձեռնություններ ուղղակիորեն աջակցում են աշխատատեղերի ստեղծմանը, ՓՄՁ աճին և կլիմայի հարմարվողականությանը: Այս կենտրոնացումը անդրադառնում է այնպիսի կարևոր մարտահրավերներին, ինչպիսիք են արտագաղթը, հետճգնաժամային վերականգնումը (օրինակ՝ Արցախի բնակչության տեղահանումը) և գյուղական համայնքների խոցելիությունը՝ միաժամանակ օգտագործելով առկա ֆինանսավորման հոսքերը: Ծրջանաձև տնտեսությունը և էներգետիկ դիմակայությունը որպես փոխլրացնող բաղադրիչներ ինտեգրելով, ինչպիսիք են գյուղմթերքի մշակման կոոպերատիվները կամ արևային էներգիայով աշխատող ՓՄՁ-ները, ծրագրերը կարող են միաժամանակ հասնել ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ - 1, 8, 9, 13), ԵՄ Կանաչ գործարքի նպատակներին և Հայաստանի ԱՌՆ ռազմավարությանը: Տնտեսական դիմակայությունը լայնածավալ շրջանակ է առաջարկում դոնորներից ներդրումներ ներգրավելու, արտագաղթը նվազեցնելու և կլիմայի համակարգային հարմարվողականություն ստեղծելու համար՝ դարձնելով այն համայնքային միջամտությունների մեկնարկի ամենաազդեցիկ կետը:

Այսպիսով, Հայաստանում ՀԱՀ-ը վերաբերում է **տնտեսական դիմակայունությանը** և ընտրության չափանիշների միջոցով նպատակ է դրվել ավելի լավ հասկանալ, թե ինչու է այս թեման առնչվում համայնքապետարանին և հարցնել, թե արդյոք այն արձանագրված է նաև տեղական մակարդակի ռազմավարությունների մեջ:

Ընտրության գործընթացը

2025 թվականին ԱլԳ մասնակից երկրների թվով մինչև 10 համայնքներ կընտրվեն՝ Առաքելությանը միտված տնտեսության ուղին անցնելու համար: Հաջողակ դիմորդները կօգտվեն սովորելու այս առաջարկից և դրամաշնորհներից՝ տեղական և տարածքային կառավարման համակարգային բարեփոխում իրականացնելու, բնակիչների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում մեծացնելու և տեղական տնտեսական աճի համար նպաստավոր միջավայր ստեղծելու համար:

Դիմորդները պետք է ցույց տան, որ ունեն արագ մոբիլիզացիայի և նախաձեռնության շարունակման/զարգացման կարողություններ ծրագրի ավարտից հետո: Տարբեր դերակատարների հետ համագործակցության վերաբերյալ հիմնավորումները, ինչպես նաև ծրագրերի և նորարարությունների իրականացման կարողությունները և փորձը նույնպես հաշվի կառնվեն գնահատման ընթացքում:

Ընտրության գործընթացում ներգրավված կլինեն ՄԱԶԾ-ն և Եվրոպական հանձնաժողովը՝ ինչպես երկրի, այնպես էլ տարածաշրջանային/կենտրոնական մակարդակով:

Այն համայնքները, որոնք նախկինում մասնակցել են **ՀՀՏԶ Համայնքային վերակերպումներ** ծրագրերին նույնպես կարող են դիմել:

Այս դրամաշնորհային ծրագիրը նախատեսված է այն համայնքների համար, որոնք նախկինում չեն մասնակցել **ՀՀՏԶ պորտֆելային ուղի** դրամաշնորհային ծրագրին, որպեսզի հնարավոր լինի ընդլայնել համայնքների թիվը և բազմազանեցնել ՀՀՏԶ ցանցը:

*Այն համայնքները, որոնք մասնակցել են **ՀՀՏԶ պորտֆելային ուղի** դրամաշնորհային ծրագրին, և արդեն ավարտել են մեկնարկի և զարգացման փուլերը, հնարավորություն կունենան դիմելու մասշտաբային էֆեկտի հասնելու դրամաշնորհների համար հայտարարվող այլ հրավերի, և ՀՀՏԶ-ն կշարունակի աջակցել նրանց:*

2025թ. ընտրության գործընթացը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՀՐԱՎԵՐ	
Ամսաթվեր	Մայիսի 26-հունիսի 15, 2025թ.
Համապատասխանության չափորոշիչներ	3 չափանիշ Խնդրում ենք հաշվի առնել, *որ ՄԱԶԾ պորտֆելային ծրագրի համայնքներն իրավասու չեն դիմել: ՀՀՏՀ մյուս ծրագրերի մասնակից համայնքները կարող են դիմել, եթե համապատասխանում են 3 չափորոշիչներին:*
Ընտրության չափորոշիչներ	Համապատասխանության 10-ը չափորոշիչ (տես ստորև)
Ընտրության գործընթաց **Երկար ցանկի կազմում**	Ստացված հայտերի զտում՝ համապատասխանության չափորոշիչների հիման վրա, ՄԱԶԾ Հայաստանի թիմի կողմից, որն ապահովում է մշտադիտարկում:
Ընտրության գործընթաց **Կարճ ցանկի կազմում**	ՄԱԶԾ Հայաստանի թիմը, գնահատման թերթիկի հիման վրա, ուսումնասիրում է ներկայացված հայտերը և առաջարկում թեկնածու համայնքներ՝ զրույցի/դիտարկման համար.
Ընտրության գործընթաց **Զրույց**	ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրային թիմը վավերացնում է կարճ ցանկի գործընթացը: Կարճ ցուցակում ընդգրկված համայնքները կհրավիրվեն մոտիվացիոն զրույցի/հանդիպման՝ համապատասխան Համայնքի ղեկավարի թիմի և ՄԱԶԾ / ՀՀՏՀ թիմի միջև:
Ընտրության գործընթաց **Ընտրող հանձնաժողով**	Կարճ ցուցակի գնահատման և զրույցի հիման վրա ՄԱԶԾ թիմը ներկայացնում է իր առաջարկած թեկնածուներին ԵՄ-ի (DG ENEST), ՄԱԶԾ տարածաշրջանային և Բրյուսելի գրասենյակների ներկայացուցիչներից բաղկացած Ընտրող հանձնաժողովին:
Հայտերի քանակը	ՀՀՏՀ ցանցի գործող կարգավիճակ ունեցող բոլոր անդամները կարող են դիմել: Քանի որ անդամների թիվը մեծապես տարբերվում է երկրից երկիր, 2-5-ը կառաջադրվեն զրույցի համար: Հաջողած դիմորդների վերջնական թիվը կախված կլինի թեկնածու համայնքապետարանների պատրաստվածության և կարողությունների աստիճանից: 2025 թվականի ընթացքում հետաքրքրության արտահայտման մրցույթով տարածաշրջանի երկրներից կընտրվեն թվով մինչև 10-ը համայնքներ:

	ԵՄ-ի համապատասխան պատվիրակությունները ՄԱԶԾ երկրների գրասենյակների կողմից կտեղեկացվեն ընտրության գործընթացի վերաբերյալ:

Աղյուսակ 1. ՀԱՀ-ի գործընթացի ակնարկ:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ՀԱՀ-ի մեկ այլ փուլ կլինի 2026 թվականին:

Նախատեսվող ժամանակացույց

Միջոցառում	**Ամսաթիվ**
ՀԱՀ-ի հայտարարություն	*26-ը մայիսի 2025թ.*
Տեղեկատվական հանդիպումներ ՀԱՀ-ի վերաբերյալ	*03-ը հունիսի 2025թ.* *10-ը հունիսի 2025թ.*
ՄԱԶԾ-ից պարզաբանումներ պահանջելու ժամկետ	*մայիսի 26-ից հունիսի 15, 2025թ.*
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	*15-ը հունիսի 2025թ.*
Հրույցի հրավեր	*մինչև հուլիսի կես*
Վերջնական գնահատում և ընտրության հանձնաժողով	*մինչև հուլիսի վերջ*
Վերջնական արդյունքների հրապարակում	*11-ը օգոստոսի 2025թ.*
Առաքելության ուղու մեկնարկ	*01-ը սեպտեմբերի 2025թ.*
Մեկնարկային դրամաշնորհի իրականացումը սկսելու նախնական ժամկետ	*2025թ. նոյեմբեր – 2026թ. հունվար*
Զարգացման հոսքի դրամաշնորհի իրականացումը սկսելու նախնական ժամկետ	*2026թ. մայիս –2026թ. օգոստոս*
Մասշտաբի էֆեկտի հասնելու դրամաշնորհի իրականացումը սկսելու նախնական ժամկետ	*2026թ. դեկտեմբեր – 2027թ. ապրիլ*

Համապատասխանություն և ընտրության չափորոշիչներ

Ստորև ներկայացված են ՏԻՄ-երի **համապատասխանության 3 և ընտրության 10-ը չափորոշիչները**, որոնք օգտագործվում են Հետաքրքրության արտահայտման հայտերի գնահատման համար.

Համապատասխանության չափորոշիչները.

1. ՏԻՄ-երը պետք է լինեն Արևելյան գործընկերության հետևյալ երկրներից մեկում՝ Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, և լինեն **ՀՀՏՀ/M4EG ազգային ցանցի անդամ**:
   Այն ՏԻՄ-երը, որոնք ներկայումս ՀՀՏՀ ցանցի անդամ չեն, կարող են միանալ՝ լրացնելով անդամակցության ձևաթուղթը: Խնդրում ենք կապվել այս ՄԱԶԾ/ՀՀՏՀ հայաստանյան կոնտակտների հետ (**էջ 18**):

2. ՏԻՄ-երը պետք է ունենան իրենց տնտեսության և/կամ զարգացման համար **արդեն մշակված կամ մշակման փուլում գտնվող տեղական մակարդակի ռազմավարություն** (օրինակ՝ LEDP-ներ կամ համարժեք)՝ որով կհիմնավորվի համապատասխանությունը առաքելության թեմային (տես ստորև):

3. Մեկ կամ երկու ՏԻՄ միասին, ունենալով համաձայնություն ստանձնել համատեղ հանձնառություն փոխադարձ ուսուցման և փորձի փոխանակման, ռեսուրսների համատեղ օգտագործման վերաբերյալ, կարող են դիմել ծրագրին:
   Որպեսզի երկու ՏԻՄ-երը դիտարկվեն միասին, երկուսն էլ պետք է.
   - բավարարեն համապատասխանության և ընտրության չափորոշիչներին, և
   - ունենան արդեն մշակված տեղական մակարդակի ռազմավարություն կամ լինեն դրա մշակման փուլում, և
   - ներկայացնեն իրենց առանձին հայտերը:

   Երկու ՏԻՄ-երն էլ (ընտրվելու դեպքում) կարող են ստանալ աջակցություն. յուրաքանչյուրը՝ մինչև $20,000 ԱՄՆ դոլարի ֆինանսական փաթեթ մեկնարկային փուլում և հնարավոր լրացուցիչ աջակցություն հետագա փուլերում:

   Յուրաքանչյուր ՏԻՄ կարող է ներկայացնել ընդամենը մեկ հայտ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ ՄԱԶԾ պորտֆելային ծրագրի համայնքներն իրավասու չեն դիմել: ՀՀՏՀ մյուս ծրագրերի մասնակից համայնքները կարող են դիմել, եթե բավարարում են վերը նշված պայմանները:

Ընտրության չափորոշիչներ.

1. ՏԻՄ-ի ռազմավարությունը կամ տեղական տնտեսական զարգացման պլանը հստակ տեսլական և կողմնորոշում ունի դեպի **Տնտեսական դիմակայունություն:**

2. ՏԻՄ-երը պետք է պարտավորվեն համատեղ **ներդրումներ կատարել նախագծում**՝ յուրաքանչյուր փուլում ծրագրի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության 10%-ի չափով: Այն կարող է լինել կամ բնաիրային ներդրման միջոցով (օրինակ՝

ծրագրին համայնքային անձնակազմի հատկացված ժամանակի և մարդկային ռեսուրսների տրամադրումը, ծրագրին աջակցելու համար փորձագիտական ռեսուրսի ներգրավումը և այլն) կամ համաֆինանսավորումը ծրագրի ակտիվացման և իրականացման փուլում:

3. **Համայնքապետարանի ղեկավար անձնակազմի կողմից** առաջնորդության հոսքին **մասնակցելու հանձնառության հիմնավորում՝** ծրագրին աջակցելու նպատակով, և ղեկավարության հանձնառությունը՝ համայնքապետարանի ռեսուրսները ուսումնառության և Առաքելությանը միտված պորտֆելների իրականացման նպատակով տրամադրելու համար:

4. Կոնկրետ արդյունքների և կայուն ազդեցության հասնելու համար **համայնքային զարգացման նախագծեր իրականացնելու կարողությունների մասին հիմնավորումներ՝** ցույց տալով անցած ճանապարհը:

5. Կառավարության, միջոլորտային կառույցների, ՀԿ-ների, տեղական և միջազգային կազմակերպությունների, մասնավոր հատվածի և այլոց հետ **գործընկերություն հաստատելու հաջողված ջանքերի ապացույց**: Ի հավելումն, **նաև այս ծրագրի շրջանակում,** վերը նշված կառույցներից որևէ մեկի հետ **նախատեսված գործընկերության հաստատում**:

6. **Նոր մոտեցումներ իրականացնելու հստակ հանձնառության դրսևորում** և բաց մտածողություն նորարարություն անելու համար, որը չափվում է նմանատիպ նախագծերի նկատմամբ ցուցաբերված հետաքրքրության մակարդակով և հատկացված ժամանակով: Որոշակի փորձ նորարարության կամ նոր լուծումների, մոտեցումների և աշխատանքի նոր եղանակների փորձարկման վերաբերյալ. օրինակ՝ խմբային աշխատանք, առանձին աշխատանքային խումբ, միջոլորտային թիմեր:

7. **Համագործակցային աշխատանքի ցուցադրում** – ներկայացնել ՏԻՄ կարողությունները զարգացման ծրագրերի համատեղ ստեղծման նպատակով տարբեր սեռերի և ծագման քաղաքացիներին ներգրավելու առումով և քաղաքացիների ներգրավվածության/մասնակցության բարձր մակարդակի ապահովումը կդիտվեն որպես առավելություններ:

8. **Ակտիվ մասնակցություն Համայնքային ուսումնական կենտրոնի (ՀՈՒԿ) / Urban Learning Center (ULC)** գործունեությանը, միջոցառումներին և դասընթացներին կարող են համարվել որպես առավելություն:

9. **Կանանց հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացման նախկին փորձառությունը** (որպես քաղաքացիներ, առաջնորդներ և ձեռներեցներ), գենդերային ինտեգրումը հանրային ծառայությունների մատուցման մեջ կարող է համարվել որպես առավելություն: Գենդեր արձագանքող սկզբունքների ներդրման համար բաց լինելը և տեխնիկական ու ղեկավար անձնակազմի կողմից աջակցության ապահովումը կդիտվի որպես առավելություն:

10. **Միջհամայնքային համագործակցության մասին հիմնավորումը կամ տեղական մակարդակի ռազմավարության կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ)** տեղայնացման կամ ֆինանսական նորարարական նախաձեռնությունների հետ՝ կդիտվի որպես առավելություն:

Դիմելու գործընթացը և լրացուցիչ տեղեկություններ

ՀՀՏԶ ցանցի հետաքրքրված անդամ համայնքները պետք է էլ. փոստով ներկայացնեն իրենց հայտերը ի պատասխան հայտարարված Հետաքրքրության արտահայտման հրավերի, որը բաց է ս.թ. **մայիսի 26-ից մինչև հունիս 15-ը**: Վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ընդունվի: Հայտի ձևը և ուղեցույց փաստաթուղթը Հայաստանում շրջանառվում է ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի կողմից՝ հայերեն լեզվով:

Տեղեկատվական հանդիպումներ ՀԱՀ-ի և մոտեցումների ներկայացման համար

Կլինեն առնվազն երկու առցանց լիագումար հանդիպումներ (օգտագործելով Zoom հարթակը), որտեղ կարող են մասնակցել բոլոր հետաքրքրված համայնքները: Առցանց հանդիպումները տեղի կունենան՝

- **Հունիսի 3**-ին, ժամը **15:00**, և
- **Հունիսի 10**-ին, ժամը **15:00**

Այս հանդիպումները կծառայեն ՀՀՏԶ նոր փուլի մոտեցման և տերմինաբանության, ինչպես նաև գործնական և ոգեշնչող օրինակների ներկայացմանը:

Բոլորը Տեղեկատվական հանդիպումները կունենան հարցուպատասխանի բաժին պոտենցիալ դիմորդների համար:

Լրացուցիչ հարցերը կարող են ուղարկվել նաև Հայաստանի ՀՀՏԶ ծրագրի թիմին՝ ստորև ներկայացված կոնտակտներով:

ՀՀՏԶ Հայաստան - կոնտակտներ.

- Քրիստ Մարուքյան՝ ՀՀՏԶ ծրագրի համակարգող, krist.marukyan@undp.org
- Մոնիկա Հովհաննիսյան՝ ՀՀՏԶ ծրագրի օգնական, monika.hovhannisyan@undp.org

- **Խնդրում ենք հարցումների պատճենն ուղարկել. eu.m4eg@undp.org**

Հավելված 1՝

Հետաքրքրության արտահայտման հրա